Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում է "Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն" փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենթարկել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերությունե) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2018թ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերության լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա:

Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

27 փետրվարի, 2019թ.
"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ" ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2018թ.	31.12.2017թ.
		'000 դրամ	'000 դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	954
Ոչ նյութական ակտիվներ		23	3,205
		23	4,159
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ		44	1,101
Հարկերի գծով կանխավճար		39	-
		83	1,101
Ընդամենը ակտիվներ		106	5,260
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կանոնադրական կապիտալ	1.2	100	100
Պահուստ		6	6
Կուտակված վնաս		(22,200)	-
		(22,094)	106
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		-	954
		-	954
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5	22,200	4,200
		22,200	4,200
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		106	5,260

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Հոգևոր-մշակութային հանրային" ՀԸ փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության կողմից 2019թ. փետրվարի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Մանյա Սարդլիշվիլի
Գործադիր տնօրեն

Ռոբերտ Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ" ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2018թ. '000 դրամ	2017թ. '000 դրամ
Դրամաշնորհից եկամուտ	6	151,128	152,717
Անձնակազմի գծով ծախսեր	7	(79,501)	(75,095)
Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ծախսեր	8	(72,000)	(49,800)
Հեռուստահաղորդումների և հեռառձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	9	(19,507)	(23,913)
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսեր		(954)	(2,543)
Այլ ծախսեր		(1,366)	(1,366)
Վնաս մինչև հարկումը		(22,200)	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա զուտ վնաս		(22,200)	-
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		(22,200)	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Հոգևոր-մշակութային հանրային»ՀԸ փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության կողմից 2018թ. փետրվարի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Մանյա Սարգսիշվիլի
Գործադիր տնօրեն

Ռոբերտ Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ" ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ '000 դրամ	Պահուստ '000 դրամ	Կուտակված վնաս '000 դրամ	Ընդամենը կապիտալ '000 դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2017թ.	100	6	-	106
Տարվա զուտ շահույթ	-	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017թ.	100	6	-	106
Տարվա զուտ վնաս	-	-	(22,200)	(22,200)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2018թ.	100	6	(22,200)	(22,094)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Հոգևոր-մշակութային հանրային» ՀԸ փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության կողմից 2019թ. փետրվարի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Մանյա Սարդլիշվիլի
Գործադիր տնօրեն

Ռոբերտ Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ" ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	2018թ.	2017թ.
	'000 դրամ	'000 դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհից	150,174	150,174
Վճարումներ գնումների դիմաց	(71,681)	(77,159)
Վճարումներ աշխատակիցներին	(60,188)	(55,203)
Վճարումներ հարկերի գծով	(19,353)	(20,886)
Այլ	(9)	(20)
	(1,057)	(3,094)
Դրամական միջոցների զուտ հոսք	*(1,057)*	*(3,094)*
Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ	*1,101*	*4,195*
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ	*44*	*1,101*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության կողմից 2019թ. փետրվարի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Մանյա Սարդլիշվիլի
Գործադիր տնօրեն

Ռոբերտ Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ